


ՄԵՆՔ ՀԻՇՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ՀԵՐՈՍՆԵՐԻՆ



<<Օհանյան>> կրթահամալիրում խորհրդավոր իրարանցում էր: Հայրենասիրական ոգով տոգորվել էր ողջ կրթօջախը: Կրթահամալիրի սաները կազմակերպել էին հուշ երեկո՝ նվիրված Գետաշենի ազատագրման համար իր կյանքը նահատակած ազատամարտիկ Թաթուլ Կրպեյանին: Ասելիքը շատ էր, սակայն հույզերը այնքան էին ողողել մասնակիցներին, որ մեր՝ հանդիսատեսիս աչքի առաջ ծնվեց և նահատակվեց Գետաշենի արծիվը:

Դարեր ի վեր մի թիզ հողն ազատագրելու համար արյան գետեր են հեղեղվել: Թաթուլն էլ գոհվեց և դարձավ չքնաղ Գետաշենի ոսկեթույր ցորենը: Վարժարանականները միջոցառման ընթացքում արտասանեցին բանաստեղծություններ, որոնք Թաթուլի մտքի ճախրանքի արդյունքն էին: Լսելով նրա բանաստեղծությունները՝ հանդիսատեսը հասկացավ, որ Թաթուլը, կանխազգալով իր մահը, մինչև վերջին շունչը երգել և երկրպագել է հայրենիքը: Ծանր էր լսել, որ Թաթուլը տանը թողնելով սիրելի կնոջն ու դստեր խանձարուրը, արժանապատվորեն ընդունեց մահը՝ հանուն չքնաղ Գետաշենի ազատագրման: Խանձարուրը փոքրիկ Ասպրամն է, որ կրթահամալիրի սանն է և մասնակցում էր իր հոր հուշ-երեկոյին: Մենք փշաքաղվել էինք, երբ հերոսի դուստրը թաց աչքերով, սակայն կրկին հերոսաբար և խրոխտ արտասանեց իր անմահ հոր գրվածքներից: Դա վսեմ աղջնակի ձայնով ապրելու և արարելու, ստեղծելու և կառուցելու մեր նոր սերնդի կոչն էր կարծես: Նահատակված հայ հերոսներ, թող ձեր շիրմահողը թեթև լինի և հիշատակն անմահ:

Կրթահամալիրի 2-րդ հարկի 4-րդ դասարանը Թաթուլ Կրպեյանի դասարանն է, որտեղ ավարտեց դուստրը՝ Ասպրամ Կրպեյանը՝ այժմ ԵՊՀ-ի ուսանող: Դասարանի պատերին փակցված է Կրպեյանի նկարներով և բանաստեղծություններով լի ցուցատախտակը:

*Ավա՛ղ, քարերն ու դավերն են
Փակել ճամփան իմ դարի:*

